# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԷՍ ԹԻ ԷՅ-Ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ2 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | Էս թի էյ | Բաճկոն և տաբատ՝ ամենօրյա, շտաբային (Բաճկոն և տաբատ՝ ամենօրյա (վետրովկա ԱԱԾ)) Համազգեստը բաղկացած է բաճկոնից և տաբատից, վրան անմիջապես կարված զույգ կրծքանշաններից և զույգ թևքանշաններից: Արտադրվում է մուգ կանաչավուն երանգի «Ռիպստոպ» տեսակի 235 գրամ մակերեսային խտությամբ, 44% բուրդ, 54% պոլիէսթեր և 2% լայկրա բաղադրությամբ գործվածքից (ըստ նմուշի): Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Բաճկոնը կազմված է լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը միացվում են կենտրոնական շղթայով, ունի դիմացի և հետին կոկետկաներ, լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղահայաց կենտրոնական ծալվածքներով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են 2 զույգ պաշտպանական գույնի 14մմ պլաստմասե փակ կոճակներով: Կողային գրպանները շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով, գոտու վրա կողքերից էլաստիկ ժապավեններով (շիպլետ) ձգված: Օձիքը ծալովի է, օձիքի միացման կարում մշակվում է կախիչ, թևերը ներկարված՝ մուգ կանաչավուն գույնի 14մմ պլաստմասե երկուական փակ կոճակով |

| | | |
|---|---|---|
| | | կոճկվող մանժետներով (մանժետները՝ ներդիր կտորով): Յուրաքանչյուր ուսադիրի շրջանում 2 փակ օղակներ և 2 հատ 3.4-3.6սմ լայնքով կամրջակներ՝ ուսադիրների ամրացման համար: Աստառը՝ մետաքսյա (90գ/մ2) մուգ կանաչավուն գույնի գործվածքից: Ձախ և աջ լանջափեշերին ներսամասից երեսացու կտորով մշակվում է ծոցագրպաններ, որոնք կոճկվում են մեկական պլաստմասե կոճակներով և օղակներով: Ձախ և աջ թևքերի վրա մշակվում են սեպաձև տեսքով 7.0x9.0 սմ չափսի ասեղնագործ կամ մեռու գործվացքով (merrow) ՀՀ զինանշանը՝ ձախ թևքին և ԱԱԾ խորհրդանշանը՝ վահանը և դրոշը համապատասխանաբար եռագույն գունավորումներով (ըստ նմուշների): Կրծքամասի գրպանների կափույրների վրա՝ գրպանների լայնությանը համաչափ, մշակվում են 2.5×12.5 սմ չափսի կրծքանշաններ՝ ՛՛ՀՀ ԱԱԾ՛՛ գրվածքը՝ աջ, և ՛՛ԴՆՊ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ՛՛ ձախ կափույրներին : Տարբերանշանների գրվածքների ձևերը և տեսակները կտրամադրվի Պատվիրատուի կողմից չափս հասակային տվյալների տրամադրմանը զուգահեռ: Տաբատը կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով է, գրպանների միջուկը՝ երեսացու կտորից է: Աջ հետնամասում կտրված գրպան՝ ուղղանկյուն կափույրով, որը կոճկվում է մեկ կամ երկու պլաստմասե 15մմ կոճակով և օղակով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին 6 հատ կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Կողային կարերում անցկացվում է 1.5-1.8 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կամ համարժեք կապույտ գույնի մահուդից երիզներ: Առաջամասում, մինչև ծնկների ստորին հատված մշակվում է մետաքսյա մուգ կանաչավուն գույնի գործվածքից աստառ: Պիտակավորումը: Բաճկոնի ձախ ծոցագրպանի ներսից և տաբատի գոտու ներսից ձախ մասին պետք է կարված լինի պիտակներ: Պիտակի վրա նշված՝ տեսականու չափսը, խնամքի վերաբերյալ գրառումներ և սիմվոլներ, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և մրցույթի համարը: Բաճկոնի կենտրոնական շղթայի շնիկի վրա պետք է կախված լինի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10-12 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ: Արկղերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և/կամ արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման տարեթիվը, աճուրդի կոդը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

СТА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ2 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 2 | | |